# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ԱՄ/80-2019

ք.Արտաշատ

„20„ 05 2019թ.

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԻ 2017Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <դ> ենթակետով և 13-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել 2016թ. Արցախի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված Վարդան Մկրտչյանի անունով:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2017թ. սեպտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հանրակրթական դպրոցների կանոնադրությունները հաստատելու և Արարատի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 26-ի N 124 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 94 որոշման հավելվածի 24-րդ տողում և որոշմամբ հաստատված կանոնադրության վերնագրում ու տեքստում << <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել << << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշենի Վարդան Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> >> բառերով:

3. Հանձնարարել դպրոցի տնօրենին՝ համապատասխան ռեգիստրում իրականացնել կատարված փոփոխության պետական գրանցումը:

20.05.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ